ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ ___156___
« 12 » մարտի 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2018թ. թիվ 20Ա, 21Ա, 22Ա որոշումները:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կատ. Ա. Մարտիրոսյան
հեռ/ 094-34-70-38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » մարտի 2018թ. № 20-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՂԴԱՆ ԳՅՈՒՂԻ 06-079-0010-0015 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յաղդան գյուղի փողոց 1, տուն 25 հասցեի բնակիչ Արամայիս Վազգենի Քոչարյանի /ծնված 22.01.1961թ./ դիմումը, համայնքապետարանի կողմից տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.02.1991թ. թիվ 1 որոշումից քաղվածքը, «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵ-ԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից կազմված տնատիրության տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ 510-Ն օրենքով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 06-079-0010-0015 ծածկագրում գտնվող 2717.3քմ բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը՝

ա. Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 06-079-0010-0015 ծածկագրում գտնվող հողամասի մակերեսը՝ 2717.3քմ.

բ. հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 2717.3քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արամայիս Վազգենի

Քոչարյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 06-079-0010-0015 ծածկագրում գտնվող 2717.3քմ հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 102.96քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 106.39քմ մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի, 14.30քմ մակերեսով բաց պատշգամբի, 4.55քմ մակերեսով աստիճանահարթակի, 38.19քմ մակերեսով անասնաշենքի, 17.15քմ մակերեսով հավանոցի և 30.72քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Արամայիս Վազգենի Քոչարյանի սեփականության իրավունքը:

4. Հաստատել 06-079-0010-0015 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Յաղդան փողոց 1, բնակելի տուն 25:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

2018թ. մարտի 05
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » մարտի 2018թ. № 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանի 11-րդ կետով՝

որոշում եմ.

1. 2018թ. ապրիլի 13-ին հայտարարել մրցույթներ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայքնային ծառայության հետևյալ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար.

1) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի՝ ծածկագիր 1.2-1, մրցույթը կայանալու է ժամը 12:00-ին;

2) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի՝ ծածկագիր 2.3-1, մրցույթը կայանալու է ժամը 14:00-ին;

3) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի՝ ծածկագիր 3.2-1, մրցույթը կայանալու է ժամը 16:00-ին:

2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություններ azdarar.am-ում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին 2-օրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ Լոռու մարզպատարանի աշխատակազմին:

3. Մրցույթային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Անի Մարտիրոսյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՆԵՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

2018թ. մարտի 12
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » մարտի 2018թ. № 22-Ա

ՈՒՌՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՎՈՐԳ ՎՈԼՈԴԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՏՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Ուռուտ գյուղի բնակիչ՝ Գևորգ Վոլոդի Մալխասյանին պատկանող բնակելի տանը տրված գ. Ուռուտ, փողոց 1, 3-րդ նրբ., 2-րդ փակ., տուն 1 հասցեն (տնամերձ հողամասի ծածկագիրը՝ 06-105-101-021, մակերես՝ 0.085հա):

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2018թ. մարտի 22
գ. Լոռի Բերդ